Հ/17.3/17/94

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ԵՔ-ԴՄ- 05

Ք. Երևան 15.10. 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից «Չարենցավանի երիտասարդական, ուսանողական» ՀԿ-ի, ի դեմս ՀԿ-ի ղեկավար՝ Գառնիկ Բեգլարյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115 Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001 Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշումը (այսուհետ որոշումներ), Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 10-ի «Կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» N 1692-Ա/2 հրամանը, Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության կողմից դրամաշնորհների հատկացման մրցույթի հանձնաժողովի 24.09.2021թ. N 04/21 արձանագրությունը «Երիտասարդները հանուն Չարենցավանի» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել 2634.0 հազար (երկու միլիոն վեց հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ

վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշումներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. Կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.2.3.4. Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական

հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. Կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.10. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարվելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.11. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը և հաշվետվությունը:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1 կետում սահմանված գումարի 80%-ը կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո, իսկ 20%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում:

5.2. Համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է

նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման և հաշվետվությունների ընդունման ժամկետը մինչև 2021 թ. դեկտեմբերի 15-ն է:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Երևան, Վ. Սարգսյան 3 Կառավարական տուն N 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732 Պատվիրատուի ստորագրությունը Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ **Վահրամ Գասպարյան** /ստորագրություն/ Կ.Տ.	«Չարենցավանի երիտասարդական, ուսանողական» ՀԿ ք. Չարենցավան, 3-րդ թաղամաս, 3-րդ շենք, բն. 12 beglaryan.garnik@mail.ru բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ Հ/Հ 2473000525000000, ՀՎՀՀ02807649 ՀԿ-ի ղեկավար՝ **Գառնիկ Բեգլարյան** /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված 1
2021թ. հոկտեմբերի 15-ին
կնքված N ԵՔ-ԴՄ- 05 պայմանագրի

«Երիտասարդները հանուն Չարենցավանի»
դրամաշնորհային ծրագրի

Ծրագրի նկարագրություն

Չարենցավան համայնքը խոշորացվել է 2017 թվականին: Այն իր մեջ ներառում է Չարենցավան քաղաքը և հարակից 5 գյուղական բնակավայրերը՝ Արզական, Ալափարս, Ֆանտան, Կարենիս, Բջնի: Ընդհանուր թվով համայնքում կա շուրջ 10.000՝ 18-35 տարեկան բնակիչ, որոնցից 700-ն ամեն տարի սովորում է ՀՀ ԲՈՒՀերում, սակայն Չարենցավան համայնքում երիտասարդների ժամանցն ու ակտիվ կյանքը բացակայում է, երիտասարդները հազվադեպ են հանդես գալիս նախաձեռնություններով կամ կազմակերպում միջոցառումներ: Ուստի կարիք կա երիտասարդներին ցույց տալ համախմբված աշխատանքի կարևորությունն ու երիտասարդական նախաձեռնությունների բնույթն ու իրականացման սկզբունքները: Սա կարևոր է Չարենցավան համայնքի զարգացման ու երիտասարդական ներուժի արդյունավետ օգտագործման առումով:

Կազմակերպության փորձառությունը *Երիտասարդական, ուսանողական ՀԿ-ի նպատակն է Չարենցավան խոշորացված համայնքի երիտասարդների համախմբում, ակտիվացում, երիտասարդական ծրագրերի իրականացում, համայնքանպաստ նախաձեռնությունների աջակցում: Կազմակերպությունը Չարենցավան համայնքում գործում է 2007 թվականից և բազմաթիվ հանրապետական և միջազգային ծրագրերի մասնակից ու նախաձեռնող է:*

- *2018թ-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացրել է «Մեկ խոշորացված համայնք, մեկ միասնական երիտասարդություն» խորագրով սեմինարը Չարենցավան խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերից եկած երիտասարդների մասնակցությամբ՝ նպատակ ունենալով երիտասարդներին ներկայացնել խոշորացման նպատակն ու սպասվելիք արդյունքները, ինչպես նաև տարբեր բնակավայրերի երիտասարդներին ծանոթացնել միմյանց հետ:*
  https://www.facebook.com/charentsavanmunicipality/videos/1600381676724652/

- *2019թ-ին իրականացվել է «Մենք ենք տերը մեր երկրի» ծրագրի երկրորդ փուլը՝ նպատակ ունենալով բարձրացնել երիտասարդների հայրենասիրությունն ու նրանց ծանոթացնել զինվորական ծառայությանը:*
- *https://www.youtube.com/watch?v=riK6B56QTRo*

- *2019թ-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացրել է «Բնության հետ համաքայլ» բնապահպանական ծրագիրը: 2019թ-ին ԵՈՒՀԿ-ն մասնակցել են ԵՄ հանուն մշակույթի. Առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ»*

ծրագրին, շահել դրամաշնորհային ծրագիր և 2020 թվականին ձեռնամուխ եղել Կոտայքի մարզային տուրիստական ասոցիացիայի հիմնմանը՝ նպատակ ունենալով զարգացնել զբոսաշրջությունը Կոտայքի մարզի կլաստերում՝ մասնավորապես Բջնի և Արզական գյուղերում, որոնք Չարենցավան խոշորացված համայնքի մի մասն են:

- **Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները**

Ծրագրի նպատակն է Չարենցավան խոշորացված համայնքի բոլոր 6 բնակավայրերից ընտրված 18-35 տարեկան 30 մասնակցի կարողությունների զարգացում՝ երիտասարդական նախաձեռնություններին մասնակցության և ակտիվ քաղաքացիական հասարակության ձևավորման համար 5-օրյա սեմինար-թրեյնինգի միջոցով:

Ծրագրի խնդիրներն են

1. Բարձրացնել խոշորացված համայնքի երիտասարդների իրավագիտակցության մակարդակը 4-օրյա սեմինար-թրեյնինգների միջոցով՝ նրանց տալով գիտելիքներ երիտասարդական նախաձեռնությունների, միջազգային համագործակցությունների, դրամաշնորհային և փոխանակման ծրագրերի վերաբերյալ:

2. Իրականացնել համատեղ երիտասարդական նախաձեռնություն, որը կընտրվի հենց ծրագրի ընթացքում:

Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք հետևյալը

- *Բարձրացել է խոշորացված համայնքի 18-35 տարեկան 30 երիտասարդի անձնային աճը և իրավագիտակցության մակարդակը երիտասարդական նախաձեռնությունների ոլորտում առնվազն 50%-ով /առաջ-հետո հարցումներ/:*
- *Իրականացված 1 գործնական ծրագիր մասնակից երիտասարդների միջոցով:*

Գործողություններ

1. 4-օրյա սեմինար-թրեյնինգի կազմակերպում1.1 Շահառուների խմբի ստեղծում՝ հայտարարություն տեղադրելով համայնքապետարանի պաշտոնական և ֆեյսբուքյան էջերում, վարչական ղեկավարների հետ հանդիպումներ, երիտասարդների ընտրություն

1.2 Օրակարգերի, հանդիպումների ընթացակարգերի մշակում, համագործակցությունների հաստատում փորձագետների և դասընթացավարների հետ՝ ընտրության կարգով:

1.3 4-օրյա թրեյնինգի իրականացում

2. Պիլոտային երիտասարդական նախաձեռնության կազմակերպում

2.1 նախաձեռնության բնույթի ընտրություն

2.2 նախաձեռնության իրականացում

3. Ծրագրի ամփոփում և հավաստագրերի հանձնում

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Շաբաթ						
			1	2	3	4	5	6	7
1	*Շահառուների խմբի ստեղծում՝ հայտարարություն տեղադրելով համայնքապետարանի պաշտոնական և ֆեյսբուքյան էջերում, վարչական ղեկավարների հետ հանդիպումներ, երիտասարդների ընտրություն*	Գառնիկ Բեգլարյան	+						
2	*Օրակարգերի, հանդիպումների ընթացակարգերի մշակում, համագործակցություններ ի հաստատում փորձագետների և դասընթացավարների հետ՝ ընտրության կարգով:*	Սաթենիկ Բալաբեկյան		+					
3	*4-օրյա թրյենինգի իրականացում*	Գառնիկ Բեգլարյան			+	+			
4	*Պիլոտային երիտասարդական*	Գառնիկ Բեգլարյան					+	+	

	նախաձեռնության կազմակերպում								
5	Ծրագրի ամփոփում	Սաթենիկ Բալաբեկյան							+

Ծրագրի շահառուները և շահագրգիռ կողմերը *Ծրագրի շահառուները համայնքի 18-35 տարեկան երիտասարդներն են, ծրագրի շահագրգիռ կողմերն են համայնքի երիտասարդների ակտիվացմամբ զբաղվող կազմակերպությունները, ՏԻՄ-ը:*

Ռիսկերի գնահատում *Ծրագրի իրականացման հետ կապված հիմնական ռիսկը Կորոնավիրուսի հետագա սրացումներն են: Եթե լինեն սահմանափակումներ, ստիպված կլինենք ծրագիրն իրականացնել առցանց:*

Ծրագրի աշխատակազմը

Ծրագրի ղեկավարը Գառնիկ Բեգլարյանն է, համակարգողը՝ Սաթենիկ Բալաբեկյանը, դասընթացավարներից մեկը՝ Փիրուզա Պետրոսյան:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	«Երիտասարդները հանուն Զարենցավանի»						
	անվա-նումը	**բովանդա-կությունը**	**Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործա-ռույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**Միջոցառման իրականացման վերջնաժամկետը**	**Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը**	**պահանջվող գումարը** (դրամ)
	Մասնակիցների ընտրություն	*Շահառուների խմբի ստեղծում*	*հայտարարության տեղադրելով համայնքապետարանի պաշտոնական և ֆեյսբուքյան էջերում, կազմակերպության ֆեյսբուքյան էջում, վարչական ղեկավարների հետ հանդիպումներ,*	*Ակնկալվում է հավաքագրել 30 ակտիվ երիտասարդի, ովքեր էլ կմասնակցեն բուն ծրագրին:*	*2021 թվականի հոկտեմբերի 15*	*2021 թվականի նոյեմբերի 30*	0

			երիտասարդնե ի իրազեկում				
	Սեմինար-թրեյնինգի նախապատրաստական աշխատանքնե ր կազմակերպում	Օրակարգ երի, հանդիպու մների ընթացակ արգերի մշակում, համագործ ակցություն ների հաստատո ւմ փորձագե տների և դասընթա ցավարներ ի հետ:	Օրակարգերի մշակում և հստակեցում, ժամկետների հստակեցում դասընթացավա ռների և փորձագետի հետ, երիտասարդնե րին օրակարգերի տրամադրում, վերջնական պայմանավորվ ածություններ:	Ակնկալվում է ունենալ 4-օրյա սեմինար-թրեյնինգի հստակ օրակարգ և այն փոխանցել 30 մասնակիցներին	2021թ հոկտեմբերի 20	2021 թվականի նոյեմբերի 30	0
	4-օրյա թրեյնինգի իրականացում	Հստակ օրակարգո վ երիտասա րդների հետ հանդիպու մներ, քննարկում ներ, դասընթա ցներ	Հատուկ մասնագետներ ի և փորձագետներ ի օգնությամբ սեմինար-թրեյնինգների իրականացում Զարենցավան խոշորացված համայնքի 30 երիտասարդի համար	Ակնկալվում է երիտասարդներին հաղորդել գիտելիքներ առաջնորդության, նորարարության, սեփական համայնքում նախաձեռնություններով հանդես գալու, համայնքային խնդիրները լուծելու գործում ներդրում ունենալու, միջազգային ծրագրերին մասնակցելու վերաբերյալ:	2021թ նոյեմբերի 10	2021 թվականի նոյեմբերի 30	2,195.000
	Պիլոտային երիտասարդական նախաձեռնության կազմակերպում	Երիտասա րդական նախաձեռ նության իրականա ցում	Երիտասարդնե ը պետք է թրեյնինգի ընթացքում որոշեն հստակ նախաձեռնությ ուն, որը կլինի համայնքային կարևորության և կազմակերպութ	Ակնկալվում է հետաքրքիր նախաձեռնություն, որը տեսանելի կլինի, կլուսաբանվի և կամփոփի սեմինար-թրեյնինգի իմաստը:	2021թ նոյեմբերի 15	2021 թվականի նոյեմբերի 30	0

			յան աջակցությամբ կիրականացնեն այն:				
	Ծրագրի ամփոփում	*Ֆինանսական և ծրագրային հաշվետվությունների կազմում*	*Ֆինանսական և ծրագրային հաշվետվությունների կազմում և ներկայացում*	Ֆինանսական և ծրագրային հաշվետվությունների ներկայացում	2021թ նոյեմբերի 30	*2021 թվականի նոյեմբերի 30*	0
							Ընդամենը՝ 2,195.000
	ԱԱՀ՝ 439000						
	Ընդամենը՝ 2,634.000						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.S.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Չարենցավանի երիտասարդական, ուսանողական» ՀԿ
ք. Չարենցավան, 3-րդ թաղամաս, 3-րդ շենք, բն. 12
beglaryan.garnik@mail.ru

բանկ ՝ Արդշինբանկ ՓԲԸ

Հ/Հ 2473000525000000, ՀՎՀՀ02807649
ՀԿ-ի ղեկավար՝
Գառնիկ Բեգլարյան

/ստորագրություն/

Կ.S.

Հավելված 2
15.10.2024 ԵՔԴՄ- 05 ծածկագրով
դրամաշնորհային մրցույթի հրավերի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու Չարենցավանի երիտասարդական, ուսանողական ՀԿ
Ծրագրի անուն Երիտասարդները հանուն Չարենցավանի

ՀՀ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Համաֆինանսավորվող գումարը (ՀՀ դրամ)	Ընդհանուր Պահանջվող և Համաֆինանսավորվող գումարները
	Աշխատավարձ						
Ա1	Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ						
1.1	Ծրագրի ղեկավար	ամիս	2	30.000		60.000	60.000
1.2	Ծրագրի համակարգող	ամիս	2	30.000		60.000	60.000
1.3	Ծրագրի հաշվապահ	ամիս	2	20.000	40.000		40.000
1.4	Փորձագետ	օր	5	20.000	100.000		100.000
1.5	2 դասընթացավարներ	ժամ	25	3500		87.500	87.500
Ընդամենը Ա					140.000		347.500
Բ	Ծրագրային ծախսեր						
2.1	Կեցություն և սնունդ /4 օր / 30 մասնակցի, ծրագրի ղեկավարի, համակարգողի, փորձագետի համար /ընդամենը՝ 33 մարդ/	Օր*մարդ*	4*33	15.000	1.980.000		1.980.000
2.2	Գրենական պիտույքների փաթեթ /թղթապանակ, նոթատետր, գրիչ, մարկեր, թղթեր/	փաթեթ	30	1500	45.000		45000
Ընդամենը Բ					2.025.000		
Գ	Գործուղում						
3.1	Տրանսպորտային միջոց Չարենցավան-Աղվերան-Չարենցավան	անգամ	2	15.000	30.000		30.000
Ընդամենը Գ					30.000		30.000
Ընդամենը Դ					2.195.000		
ԱԱՀ					439.000		
ԸՆԴԱՄԵՆԸ					2.634.000		

ՀՀ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ		
1.1	Ծրագրի ղեկավար	60,000	2 ամիս՝ յուրաքանչյուր ամսվա համար

			30.000 դրամ, ներդրում է
	Ծրագրի համակարգող	60.000	2 ամիս՝ յուրաքանչյուր ամսվա համար 30.000 դրամ, ներդրում է
1.3	Ծրագրի հաշվապահ	40.000	2 ամիս՝ յուրաքանչյուր ամսվա համար 20.000. դրամ
1.4	Փորձագետ	100.000	4 օր՝ յուրաքանչյուր օրվա համար 24.000
1.5	2 դասընթացավարներ	87500	5 օր՝ ընդհանուր 25 ժամ՝ 1 ժամը 3500 դրամ, ներդրում է
Ա2	Ղեկավար անձնակազմի աշխատավարձ		
1.1.1	Ծրագրի ղեկավար	60.000	2 ամիս՝ յուրաքանչյուր ամսվա համար 30.000 դրամ, ներդրում է
1.1.2	Ծրագրի համակարգող	60.000	2 ամիս՝ յուրաքանչյուր ամսվա համար 30.000 դրամ, ներդրում է
	Ծրագրային ծախսեր		
2.1	Կեցություն և սնունդ 30 մասնակցի, ծրագրի ղեկավարի, համակարգողի, փորձագետի համար /33 մարդ/	1.980.000	
2.2	Գրենական պիտույքների փաթեթ /թղթապանակ, նոթատետր, գրիչ/	45.000	
Գ	Գործուղում		
3.1	Տրանսպորտային միջոց Չարենցավան-Աղվերան-Չարենցավան	30.000	Չարենցավան-Աղվերան-10կմ, նախատեսվում է օգտագործել 31 տեղանոց PAZ մակնիշի ավտոբուս, համարը՝ 35VC541:
Ընդամենը		2.195.000	
ԱԱՀ		439.000	
ԸՆԴԱՄԵՆԸ		2.634.000	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Չարենցավանի երիտասարդական, ուսանողական ՀԿ
Ք. Չարենցավան, 3-րդ թաղամաս,
3-րդ շենք, բն. 12
beglaryan.garnik@mail.ru

բանկ ՝ Արդշինբանկ ՓԲԸ

Հ/Հ 2473000525000000, ՀՎՀՀ02807649
ՀԿ-ի ղեկավար՝
Գառնիկ Բեգլարյան

/ստորագրություն/
Կ.Տ.